ՈՐՈՇՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
«ՎԱԿՏՄ-ԲՄԽԾՁԲ-24/13» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան 16.07.2024թ.

ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
կրթության տեսչական մարմնի ղեկավարի
տեղակալ՝ Ռ. Գալստյան

Անդամներ՝
կրթության տեսչական մարմնի ղեկավարի
օգնական՝ Ա. Այվազյան
կրթության տեսչական մարմնի
հանրակրթության վարչության պետ՝ Ս. Ավետիսյան
կրթության տեսչական մարմնի
հանրակրթության վարչության պետի տեղակալ՝ Ա. Վիրաբյան
կրթության տեսչական մարմնի
բյուջետային գործընթացի պատասխանատու՝ Մ.Մարտիրոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Լ. Ադոնց

1. Տեղեկություն հայտերի բացման օրվա և ժամի մասին

1.1 «**ՎԱԿՏՄ-ԲՄԽԾՁԲ-24/13**» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են հուլիսի 12-ին ժամը 10:00-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և էլեկտրոնային փոստի հասցեները.

N	Մասնակիցների անվանումները	Էլեկտրոնային փոստի հասցե
1	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ	masnakcayindproc@gmail.com հեռ. 093-34-59-39

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

3. Տվյալներ՝ ներկայացված հայտերը ԳՊ/ԲԱ-ի կողմից սահմանված կարգի պահանջներին համապատասխան բացելու մասին.

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել է համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

4. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

4.1 Հարցադրումներ և պարզաբանումներ չեն եղել:

5. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

5.1 «**ՎԱԿՏՄ-ԲՄԽԾՁԲ-24/13**» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով բոլոր մասնակիցներիի կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

1) Պիտանելիության չափորոշիչ՝

ա) ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարություն՝ համաձայն հավելված N 1-ի,

բ) հայտարարություն «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշին համապատասխանության մասին՝ համաձայն հավելված N 1.3-ի,

գ) տեղեկանք մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին՝ համաձայն հավելված N 1.4-ի

2) Ֆինանսական չափորոշիչ՝

ա) գնային առաջարկ՝ համաձայն հավելված N 2-ի:

5.2 «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջների համապատասխան, սակայն Հավելված N 1.4-ում /տեղեկանք մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին/ բացակայում է հիմնական աշխատակազմում ներառված մասնագետ՝ Վահրամ Սողոմոնյանի դիպլոմի պատճեն:

• Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի «Գնումների գործընթացի կազմակերպման» մասին թիվ 526-Ն որոշման 41-րդ կետը նիստը կասեցվել է և /12.07.2024թ./սույն ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով վերոնշյալ հաղթող մասնակցին է ուղարկվել՝ անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը: Մասնակիցը սահմանված ժակետում գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է պահանջվող փաստաթուղթը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

6. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի վերաբերյալ

6.1 Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է.

Չ/Բ համար	Անվանում	Մասնակիցների անվանումը	Նախահաշվային գին	Գինն (առանց ԱԱՀ)	Գինը (ներառյալ ԱԱՀ)
1	**աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ**	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ	**1 026 000**	**976 000**	**976 000**

2	**աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ**	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ	**1 368 000**	**1 318 000**	**1 318 000**

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

7. «ՎԱԿՏՄ-ԲՄԽԾՁԲ-24/13» ծածկագրով ընթացակարգի բացման և գնահատման նիստի արդյունքների ամփոփման մասին

Հանձնաժողովը որոշեց՝

7.1 1-ին, 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամին:

7.2 Հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

7.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ չի կիրառվում:

7.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 15 (տասնհինգ) տոկոսի չափով, որոնց ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների և քարտուղարի ստորագրությունները

Նախագահ՝	Ռ. Գալստյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Մ. Մարտիրոսյան	ԳՊ/ԳԱ	
	Ա. Այվազյան	ԳՊ/ԳԱ	
	Ս. Ավետիսյան	ԳՊ/ԲԱ	
	Ա. Վիրաբյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Լ. Ադոնց	ԳՊ/ՄՀՄ	